



# ՍՈՒՐՔ ԶԱԿՈՒ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԸՆԴՈՒՅՑ



### Դասախորհրդի Կիրակի

31 ՄԱՐՏ 2019

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ողորմութեան Կանչ Մը (5)	Էջ 5
Այսօր Ամնառ (1)	Էջ 5
Ծանուցում	Էջ 7

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (65.8-25)

**Տ**էրը այսպէս կ'ըսէ. -  
«Այնպէս ինչպէս երբ ողկոյզին վրայ խաղողի ճիւղ մը մնացած ըլլայ՝ կ'ըսեն. «Մի՛ նետեր ողկոյզը, որովհետեւ անոր վրայ Տիրոջ օրհնութիւնը կայ», այնպէս ալ ես իմ ծառայիս սիրոյն պիտի խնայեմ եւ կորուստի պիտի չմատնեմ բոլորը: Յակոբի որդի Յուդայէն սերունդ մը պիտի հանեմ, որ իմ սուրբ լեռս պիտի ժառանգէ. իմ ընտրեալներս զայն պիտի ժառանգեն եւ իմ ծառաներս այնտեղ պիտի բնակին: Զիս փնտռող ժողովուրդիս համար Սարոնը հօտերու արօտավայր պիտի ըլլայ եւ Աքորի ձորը՝ նախիրներու հանգստավայր: Իսկ ձեզ որ զիս թողուցիք, իմ սուրբ լեռս մոռցաք, բախտի կուռքին սեղան կանգնեցիք եւ ճակատագրի չաստուծոյն գինի ընծայեցիք, ձեզ սուրի պիտի մատնեմ եւ բոլորդ պիտի կոտորուիք, որովհետեւ կանչեցի ձեզ եւ չլսեցիք, խօսեցայ եւ մտիկ չըրիք. ըրիք այն ինչ որ չար է իմ աչքիս, ընտրեցիք այն ինչ որ կամքիս հակառակ է»:

Ուստի այսպէս կ'ըսէ Տէրը.-

«Ահաւասիկ, ինծի ծառայողները պիտի կշտանան, մինչ դուք անօթի պիտի մնաք. ինծի ծառայողները պիտի յագեանան, մինչ

դուք ծարաւ պիտի մնաք. ինծի ծառայողները պիտի ուրախանան, մինչ դուք ամօթով պիտի մնաք. ինծի ծառայողները սրտի ուրախութեամբ պիտի ցնծան, իսկ դուք ձեր

սրտին ցաւէն պիտի աղաղակէք, անյոյս հոգիով պիտի ողբաք, որովհետեւ իմ ընտրեալներս նզովքի տեղ ձեր անունը պիտի գործածեն, եւ ես՝ Տէրս ձեզ մահուան պիտի մատնեմ: Մինչդեռ իմ ծառաներուս պիտի տամ նոր անուն մը, որպէսզի երկրի վրայ այդ անունը օրհնողը ճշմարիտ Աստուծոյ վրայ երդուած ըլլայ:

Արդարեւ, իմ ընտրեալներս պիտի մոռնան իրենց կրած նեղութիւնները, եւ ա՛լ երբեք պիտի չյիշեն զանոնք: Որովհետեւ ահա ես նոր երկինք եւ նոր երկիր պիտի ստեղծեմ. ա՛լ պիտի

չյիշեն նախկինները, բնաւ պիտի չմտաբերեն զանոնք: Իմ նոր ստեղծագործութեան մէջ անոնք միայն ցնծութիւն եւ ուրախութիւն պիտի գտնեն, որովհետեւ ահա ես Երուսաղէմը ցնծութեան վայր պիտի դարձնեմ եւ պիտի ուրախացնեմ իմ ժողովուրդս: Եւ ես պիտի ցնծամ Երուսաղէմի համար, պիտի ուրախանամ իմ ժողովուրդիս համար: Այնտեղ բնաւ լացի եւ ողբի ձայն պիտի չլսուի: Այնտեղ անժամանակ մահեր տեղի պիտի չունենան, պիտի չգտնուի ծեր մը որ իր օրերը ապրած չըլլայ. հարիւր տարեկան եղողը երիտասարդ տղայ պիտի նկատուի, իսկ հարիւրամեայ մեռնողը մեղաւոր եւ

... ինծի ծառայողները սրտի ուրախութեամբ պիտի ցնծան...

... ահա ես նոր երկինք եւ նոր երկիր պիտի ստեղծեմ...

... կեանքի  
ծառին պէս  
անվախճան  
պիտի  
ըլլայ իմ  
ժողովուրդ-  
դիս  
կեանքը....

Ծառին պէս անվախճան պիտի ըլլայ իմ ժողովուրդդիս կեանքը. իմ ընտրեալներս երկա՛ր պիտի վայելեն իրենց ծանր աշխատանքին վաստակը: Այլեւս գուր տեղ պիտի չաշխատին ու դժբախտ զաւակներ պիտի չծնին, որովհետեւ Աստուծո՛վ

Տակաւին  
իրենց  
չկանչած՝  
պիտի լսեմ  
զիրենց...

անիծեալ պիտի համարուի: Իրենց շինած տուներուն մէջ իրե՛նք պիտի բնակին, իրենց տնկած այգիներուն պտուղը իրե՛նք պիտի վայելեն. եւ ոչ թէ իրենք շինեն ու թշնամիներ բնակին կամ իրենք տնկեն եւ ուրիշներ վայելեն: Որովհետեւ կեանքի օրհնուած սերունդ մը պիտի ըլլան թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց զաւակները: Տակաւին իրենք չկանչած՝ պիտի լսեմ զիրենք. դեռ իրենց աղօթքը չաւարտած՝ պիտի հարցնեմ. “Ի՞նչ կ’ուզէք”: Այն ատեն

գայլն ու գառը միասին պիտի ճարակին. առիւծը եզան պէս յարդ պիտի ուտէ եւ օձը հողով պիտի սնանի. ոեւէ մէկուն պիտի չդպչին եւ պիտի չվնասեն իմ սուրբ լեռանս վրայ», - կ’ըսէ Տէրը:

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ  
(3.1-4.9)

**Հ**ետեւբար, եղբայրներս, Տիրոջմով ուրախացէք: Նոյն բաները գրելը ինծի համար ճանճրոյթ չէ, բայց ձեզ ճշմարտութեան մէջ կը հաստատէ:

Զգուշացէք այն մարդոցմէ, այն շուններէն, որոնք չարիք կը սերմանեն՝ ստիպելով որ թլփատուիք: Իսկական թլփատուածները մենք ենք, որովհետեւ Աստուծոյ Հոգիով լեցուած պաշտամունք կը կատարենք եւ Քրիստոս Յիսուսի միացած ըլլալով միայն կը պարծենանք, եւ ոչ թէ Օրէնքի գործադրութեամբ կամ Աբրահամի

մարմնաւոր զաւակը ըլլալով: Եթէ ատոնք բաւարար ըլլային փրկուելու համար, ինծի ոչինչ պիտի պակսէր. եւ եթէ ոեւէ մէկը կը կարծէ թէ մարմնական այդ կապին կրնայ վստահիլ, ես աւելիով կրնամ, քանի ութօրեայ թլփատուած իսրայէլացի մըն եմ, Բենիամինի ցեղէն, գտարիւն եբրայեցի եւ օրինապահ փարիսեցի: Այնքան նախանձախնդիր էի, որ Քրիստոսի եկեղեցին կը հալածէի. եւ արդար էի այնքան՝ որքան օրէնքի անթերի գործադրութիւնը կրնար տալ: Սակայն այս բոլորը, որ ժամանակ մը առաւելութիւն կը սեպէի, հիմա վնաս կը համարեմ՝ Քրիստոսի սիրոյն համար: Եւ իրաւ, ամէն ինչ վնաս կը համարեմ՝ համեմատած այն գերազանց շահին հետ, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոսը ճանչնալն է: Այդ գիտութիւնը ունենալու համար ամէն ինչ թողուցի, ոչնչութիւն սեպելով, որ պէսզի

... ամէն ինչ  
վնաս կը  
համարեմ՝  
համեմատած  
այն  
գերազանց  
շահին հետ,  
որ մեր Տէրը՝  
Յիսուս  
Քրիստոսը  
ճանչնալն է:

Քրիստոսը շահիմ, եւ կատարելապէս անոր միանամ: Այնպէս որ, իմ արդարութիւնս այլեւս օրէնքի գործադրութեանն էի գար, այլ Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատքէս, եւ այդ արդարութիւնը Աստուծո՛վ եկած արդարութիւնն է՝ հիմնուած հաւատքի վրայ: Հիմա միակ փափաքս է ճանչնալ Քրիստոսը, անոր յարուցեալ գորութիւնը, եւ անոր չարչարանքներուն մասնակից դառնալ՝ անոր մահուան օրինակը իմ վրաս առնելով, որպէսզի ես ալ արժանի ըլլամ մեռելներէն յարութիւն առնելու:

Չեմ ըսեր, թէ արդէն յաջողած եւ կատարելութեան հասած եմ, բայց հասնելու կը ձգտիմ, որովհետեւ ճիշդ ատոր համար Քրիստոս Յիսուս զիս պահեց: Եղբայրներ, ինքզինքս դեռ կատարելութեան հասած չեմ համարեր. բայց կ’աշխատիմ անցեալը մոռնալ եւ գալիքին նայիլ, եւ ուշադիր կերպով կը վազեմ դէպի նպատակակէտը,

որպէս մրցանակ ստանալու համար յաւիտենական կեանքը, որուն կը հրաւիրէ մեզ Աստուած, Քրիստոս Յիսուսով:

Արդ, դուք բոլորդ որ կատարեալ էք՝ նոյն ձեւով խորհեցէք: Իսկ եթէ որոշ կէտերու շուրջ տարբեր կը խորհիք, Աստուած ինք ձեզ պիտի լուսաբանէ: Ամէն պարագայի, միասնաբար քալենք այն կանոններով, որոնցմով ընթացանք մինչեւ հիմա:

Եղբայրներ, ինծի նմանեցէք, եւ հետեւեցէք անոնց՝ որոնք ձեզի տուած մեր օրինակով կ'ընթանան: Որովհետեւ, ինչպէս յաճախ կ'ըսէի եւ հիմա եւս լալով կ'ըսեմ, մեր մէջ կան շատեր որոնց կեանքը թշնամանք է Քրիստոսի խաչին: Անոնց վերջը կորուստ է,

որովհետեւ իրենց աստուածը իրենց փորն է. ամօթալի բաներով կը հպարտանան եւ միայն երկրաւոր բաներու մասին կը խորհին: Մենք, սակայն, երկինքի քաղաքացիներ ենք եւ

հոնկէ կը սպասենք որ գայ մեր փրկիչը՝ Յիսուս Քրիստոս, որ մեր մահկանացու մարմինները պիտի կերպարանափոխէ եւ իր մարմնին պէս փառաւոր դարձնէ իր գօրութեամբը, որով կրնայ ամէն ինչ իր իշխանութեանը ենթարկել: Ուստի, սիրելի եւ կարօտալի եղբայրներ, դուք որ իմ ուրախութիւնս էք եւ պսակս, այսպէս ամբօրէն Տիրոջ միացած մնացէք, սիրելիներս:

Եւողիային եւ Սիւնտիքին կ'աղաչեմ եւ կը թելադրեմ որ իրարու հետ հաշտուին, քանի Տիրոջ միացած են: Դուն ալ, ո՛վ հաւատարիմ գործակիցս, կը խնդրեմ որ օգնես այս երկու կիներուն, որովհետեւ ինծի հետ պայքարեցան Աւետարանի տարածման համար, Կղեմէսի եւ միւս գործակիցներու հետ միասին, որոնց անունները Կեանքի Գիրքին մէջ արձանագրուած են:

Միշտ ուրախ եղէք Աստուծոյ. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք: Բոլորին հանդէպ հեզ եւ ազնիւ եղէք: Շուտով Տէրը կու գայ: Որեւէ

բան թող չմտահոգէ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհունակ սրտով Աստուծոյ խնդրեցէք ինչ բանի որ կարիքը կը գգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի է հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են:

Ի վերջոյ, եղբայրներ, խորհեցէք այն բաները որոնք ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի, բարեհամբաւ, առաքինի եւ գովելի: Եւ գործքով կատարեցէք այն ինչ որ ինձմէ սորվեցաք եւ ընդունեցիք, ինձմէ լսեցիք եւ իմ վրաս տեսաք. եւ Աստուած, որ խաղաղութիւնը կու տայ, ձեզի հետ պիտի ըլլայ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
(17.20-18.14)

**Փ**արիսեցիներ հարցուցին Յիսուսի թէ ե՛րբ պիտի գայ Աստուծոյ արքայութիւնը: Ան պատասխանեց. «Աստուծոյ Արքայութիւնը արտաքենապէս տեսանելի նշաններով պիտի չգայ. կամ պիտի չըսեն թէ “հոս է կամ հոն”, որովհետեւ ահա Աստուծոյ արքայութիւնը ձեր միջեւ կը գտնուի»:

Ապա իր աշակերտներուն ըսաւ. «Ժամանակ պիտի գայ, երբ դուք պիտի ցանկաք մարդու Որդիին այս օրերէն մէկը տեսնել, բայց պիտի չտեսնէք: Եւ եթէ ձեզի ըսեն “ահա հոս է կամ հոն”, մտիկ մի՛ ընէք, մի՛ հետեւիք անոնց: Որովհետեւ ինչպէս որ կայծակը փայլատակելով կը լուսաւորէ երկնակամարին մէկ կողմէն միւսը, նոյնպէս պիտի ըլլայ մարդու Որդին իր գալստեան օրը: Սակայն նախ պէտք է

Միշտ ուրախ եղէք Աստուծոյ. դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղէք:

Մենք սակայն, երկինքի քաղաքացիներ ենք...

... ահա Աստուծոյ արքայութիւնը ձեր միջեւ կը գտնուի:

որ ան շատ չարչարանքներ կրէ եւ մերժուի այս սերունդէն: Ինչպէս որ Նոյի ժամանակ Աստուծոյ պատիժը յանկարծակի վրայ հասաւ, նոյնպէս պիտի պատահի մարդու Որդիին օրերուն ալ: Անոնք ալ կ'ուտէին, կը խմէին, այր կամ կին կ'առնէին, մինչեւ այն օրը, երբ Նոյ տապան մտաւ, եւ ջրհեղեղը բնաջնջեց զանոնք: Կամ ինչպէս Ղովտի օրերուն պատահեցաւ. կ'ուտէին, կը խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին եւ կը շինէին. բայց այն օրը երբ Ղովտ Սողոմը ձգեց, երկինքէն կրակ եւ ձոնամբ տեղաց եւ սպաննեց բոլորը: Նոյնը պիտի պատահի այն օրը երբ մարդու Որդին յայտնուի:

«Այդ օրը, ան որ տանիք ելած է՝ թող վար չիջնէ տան մէջ գտնուող իր գոյքերը առնելու համար: Նոյնպէս, ան որ դաշտին մէջ է՝ թող չվերադառնայ տուն ձգածները առնելու համար: Յիշեցէք Ղովտի կնոջ պարագան: Ով որ կը ջանայ իր անձը փրկել՝

Ով որ կը ջանայ իր անձը փրկել՝ պիտի կորսնցնէ գայն, եւ ով որ կորսնցնէ իր անձը՝ պիտի փրկէ գայն:

պիտի կորսնցնէ զայն, եւ ով որ կորսնցնէ իր անձը՝ պիտի փրկէ զայն: Կ'ըսեմ ձեզի, այդ գիշեր եթէ մէկ անկողնի մէջ երկու հոգի ըլլան, անոնցմէ մէկը պիտի առնուի եւ միւսը ձգուի»: Աշակերտները հարցուցին Յիսուսի. «Տէ՛ր, ո՞ր պիտի պատահի ատիկա»: Ան

պատասխանեց. «Արծիւները կը հաւաքուին հո՛ն ուր դիակ կայ»:

Յիսուս առակ մը խօսեցաւ իր աշակերտներուն, ցոյց տալու համար թէ պէտք է միշտ աղօթել՝ առանց վհատելու: Եւ ըսաւ. «Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ոչ ալ մարդոցմէ կ'ամչնար: Նոյն քաղաքին մէջ այրի կին մըն ալ կար, որ իրեն կը դիմէր եւ կը խնդրէր. “Իրաւունքս պաշտպանէ հակառակորդէս”: Դատաւորը երկար ժամանակ մերժեց դատը տեսնել, սակայն ի վերջոյ ըսաւ ինքնիրեն, “Թէեւ Աստուծմէ

չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար, բայց քանի այս այրին նեղութիւն կու տայ ինծի, իր դատը տեսնեմ, որպէսզի մինչեւ վերջ քովս գալով զիս չանհանգստացնէ”»:

Ապա Տէրը շարունակեց.

«Լսեցէք թէ ի՛նչ կ'ըսէ անիրաւ դատաւորը: Իսկ Աստուած որքա՞ն պիտի համբերէ իր ընտրեալներուն կրած անիրաւութեան, պիտի չպաշտպանէ՞ զանոնք, որոնք գիշեր ու ցերեկ իրեն կը դիմեն: Այո՛, կ'ըսեմ ձեզի որ անոնց իրաւունքը անմիջապէս պիտի պաշտպանէ: Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Բայց մարդու Որդին երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ»:

Այս առակն ալ պատմեց անոնց, որոնք կը պարծենային թէ արդար են եւ ուրիշները կ'արհամարհէին: «Երկու հոգիներ տաճար գացին աղօթելու. մէկը՝ փարիսեցի, միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին մէկ կողմ կեցած, առանձին կ'աղօթէր. “Աստուած իմ, շնորհակալ եմ քեզմէ՝ որ ուրիշ մարդոց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, կամ այս մաքսաւորին պէս ալ չեմ: Այլ շաբաթը երկու անգամ

ծոմ կը պահեմ եւ իմ եկամուտիս տասանորդը տաճարին կու տամ”: Իսկ մաքսաւորը մէկ կողմ կեցած, աչքերը առանց վեր բարձրացնելու կուրծքը կը ծեծէր եւ կ'ըսէր. “Աստուած, ներէ մեղաւորիս մեղքերը”:

... ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

Կ'ըսեմ ձեզի,՝ եզրակացուց Յիսուս,՝ ո՛չ թէ փարիսեցին, այլ մաքսաւորը արդարացած գնաց տուն. որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:



## ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՕԹՔՆԵՐ ԾԷՆՔԱՐԷՆ

ՀԵՊԻԵԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՍՐԿ. ՆՈՒՍՈՒՏԵԱՆՆԵՐ

### ՍՊԱՍՈՒՄ

*Շնորհակալություն, ով Տէր, այս օրուան համար: Ներկայությունդ չզգացի, ձայնդ չստացի, շնորհալի դէմքդ չտեսայ, բայց, գոնէ քանի մը ժամուան համար, երեկուան մոլեգին վախը անցած էր: Շնորհակալություն փութին մէջ, սենեակիս մէջ, եւ եկեղեցիին մէջ լուռ ժամերուս համար: Կարողացայ քիչ մը մտածել, կարդալ, եւ աղօթել, եւ նոյնիսկ պահ մը կրցայ երեւակայել որ օր մը նորէն խաղաղություն եւ ցնծություն պիտի գգամ: Շնորհակալություն, ով Տէր, այս լաւ բաներուն համար: Կը կարդամ «Քեզ ճանչնալ»-ու մասին, թէ ինչպէս մէկը քեզ կը ճանչնայ, եւ կ'աղօթեմ որ մտքով հասկցածս օր մը իջնէ սրտիս մէջ եւ ներքին լոյս տայ:*

*Քեզ կը կանչեմ, ով Տէր, լուռ խաւարէս: Ողորմությունդ եւ սէրդ ցոյց տուր ինձի: Դէմքդ տեսնեմ, ձայնդ լսեմ, վերարկուիդ քղանցքին դպչիմ: Կ'ուզեմ սիրել Քեզ, հետդ ըլլալ, հետդ խօսիլ եւ պարզապէս ներկայութեանդ մէջ ըլլալ: Բայց չեմ յաջողիր ատիկա իրականացնել: Աչքերս ձեռքերովս սեղմելը աղօթել չէ, եւ ներկայութեանդ մասին կարդալը՝ անոր մէջ ըլլալ չէ:*

*Բայց պիտի հասնի պահը երբ ինձի գալով, ինչպէս ըրիր վախցած աշակերտներուդ, պիտի ըսես. «Ես եմ, մի՛ վախնար»: Թող այդ պահը շուտով գայ, ով Տէր: Եւ եթէ ուզես զայն ուշացնել, այն ատեն գիս համբերատար դարձոր: Ամէն:*

(Շարունակելի 5)



## «ԱՅՍՕՐ ԱՆՃԱՌ»

ՀԵՊԻԵԱԿ՝ ՆԵՐՍԷՍ ՀՆՈՐՀԱՒԻ

ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ՝ ԳԱՌՆԵՐ

Այսօր անճառելի Լոյսին ծագումը<sup>1</sup> մեր փրկութիւնը իրագործելու համար, ստուերական տօներու լրման ժամանակ<sup>2</sup> Վերնատան մէջ ծունկի գալով կը

խոնարհի:

Եւ նախքան խորհրդալից ընթրիքը լոյս սփռողը դենջակ կը կապէ մէջքին, եւ ջուր առնելով աշակերտներուն ոտքերը կը լուայ ծառայաբար:

Հօր Աստուած Բանին՝ երկնային փառքի Լոյսին մօտենալով, Պետրոս թոյլ չտուաւ որ իր ոտքերը լուայ ան՝

որուն ձեռքերուն գործերն էին երկինքն ու երկիրը եւ երկրաւորները. անոր՝ որով կոյրերուն աչքերը բացուեցան,

խուլերն ու համրերը բուժուեցան. որ իր կամքին ենթարկեց ծովը, սաստեց ալիքները, եւ անոնց աղմուկները լռեցին:

Փոքր հօտին ընտրեալ գլուխը՝ Պետրոս խորհուրդը կ'արգիլէր անգիտակցաբար: Սակայն խորհուրդին ազդմամբ կը փոխէր իր որոշումը

Եւ հնազանդելով կը խնդրէր,  
որ ան թէ՛ ոտքերը եւ թէ՛ գլուխը լուար:  
Եւ Յիսուս անոր կ'ըսէր,  
թէ այս գլուխը ջուրով լուացման

պէտք չունի,  
բայց ոտքերդ պէտք է որ մաքրուին,  
որպէսզի գլուխին հետ  
անոնք ալ սուրբ դառնան:

Իր աշակերտներու խումբին,  
որուն նախ խօսքով ուսուցանեց,  
այսօր ծայրագոյն արարքով՝  
իր խոնարհութիւնը ցոյց տուաւ.  
այն՝ զոր հրեշտակները չեն կրնար  
տեսնել՝

հողեղէններուն սպասաւորեց,  
այն՝ որ հրեշտակներէն կը պաշտուի՝  
ծառայութիւն մատուցեց իր  
ծառաներուն:

Յիսուս կ'ըսէ, որ եթէ էակներուն Տէրս,  
Եւ բոլորին վարդապետս  
աշակերտներուդ եւ ծառաներուն  
ոտքերը հին աղտերէն լուացի,  
դուք ալ իրարու ցոյց տուէք  
նոյն խոնարհութիւնը,  
որպէսզի հպարտացեալ չարը կործանի,  
Եւ ձեր անկեալ բնութիւնը կանգնի:

Ոտքերը, այսինքն զանոնք մաքրեցիր  
քու սուրբ ձեռքերով աւագանին մէջ,  
Եւ սորվեցուցիր  
խոնարհութեամբ յաղթող ըլլալ չար  
հպարտին,

իմ մեղքերուս տիղմն ալ լուա՛  
սուրբերու գունդին աղաչանքներով,  
Եւ քայլընթացքս ուղղէ,  
որ խոնարհաբար բարձրանայ երկինք:

### **Ծանօթագրական**

- 1.- Աստուած Լոյսն է, Որդին Անոր ծագում Լոյսն է:
- 2.- Վերնատան մէջ, Յիսուս լրումին կը հասցնէ չին  
Կոսակարանի բողոքածները: Անոնց իմաստները ստուերներու  
պէս էին, եւ, ըստ քրիստոնէական մեկնաբանութեան իրենց

*անբողջական իմաստը պիտի գտնէին Վերնատան մէջ:*

## **«ԷԼԻՑ ԶՕՐԷՆՄՆ»**

Կատարեց Մովսէսի Օրէնքը,  
զոր Սինայի լեռան վրայ խօսեցաւ:  
Կերաւ նախատիպ գառը,  
բաղարջն ալ՝ դառն խոտին հետ:  
Հինը նորի փոխեց,  
ստուերը՝ լոյս ճշմարտութեան:  
գառին փոխան՝ ինք նուիրուեցաւ  
որպէս Աստուծոյ Գառ:

Անխմոր հաց բաղարջին փոխարէն  
տուաւ իր մարմինը երկնաւոր,  
կուսածին, անսերմնաւոր,  
անապական եւ հոգեւոր:  
Արեան ուխտի ոչխարին փոխարէն՝  
իր արիւնը տուաւ մեզի  
որպէս նոր ուխտի նշան:  
Եւ դառնագոյն խոտին փոխարէն՝  
իր աստուածային վարքը:

Արարածներուն թագաւորը  
Քաղցեալներուն տուաւ կեանքի հացը,  
Եւ ուրախաբար բաժակը՝  
Ադամի պատճառով տրտմեալներուն:  
Ըսելով. Ասիկա փոխան հին ուխտի  
արեան՝

Նոր ուխտն է իմ արեան,  
որ զիս յիշելու համար կատարեցէք  
մինչեւ իմ միւսանգամ գալուստը:

Տասնմէկին հետ ժողովեալներս  
քեզմէ կը հայցենք,  
որ ինչպէս բաժակին հետ անոնց տուիր  
նաեւ կենարար մարմինդ,  
մեզի ալ շնորհէ, Տէր,  
հաղորդ ըլլալ քու սեղանիդ:  
Քանի որ կենաց հացիդ փափաքը,  
Եւ ըմպելիիդ ծարաւը ունինք:

Ընտրեալ աշակերտներէն՝  
սուրբ գառնուկներէն  
Յուդա մեկնեցաւ:  
Մեղքերը բարձող Աստուծոյ Գառը  
դրամի փոխարէն մահուան կը մատնէր:  
Հոգեւոր ընթրիքին ատեն  
Ժպիռին ու նենգաւորը  
խաբերայարար կը մերձենայ  
վարդապետին հետ ուտելու:

Լոյսը խաւարեալին հետ աղերսալի կը  
խօսէր,  
որպէսզի ան դարձի գար:  
Կ'ըսէր. Եղբայրներ, ձեզմէ մէկը զիս  
մահուան պիտի մատնէ:  
Պետրոս զայն լսելով՝ կը զարհուրէր,  
եւ Յովհաննէսի ակնարկութեամբ կը  
հարցնէր,  
թէ ո՞վ պիտի ըլլար վարդապետին  
դաւանանորը:

## **Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻԱՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ ՄԵԾ ՊԱՀՔԻ ԼՍԱՐԱՆ 2019**

Հսկումի Ժամերգութիւններ ամէն Չորեքշաբթի երեկոյեան 7.00-ին  
(3, 10 Ապրիլ)

\*\*\*

Արեւազալի Ժամերգութիւններ  
Ամէն Ուրբաթ առաւօտեան 10.00-ին (5, 12 Ապրիլ)

\*\*\*

### **ԼՍԱՐԱՆ՝**

յետ Հսկումի Ժամերգութիւններուն

4

Չորեքշաբթի, 3 Ապրիլին՝

**"Յարատեւ Աղօթքի Սիրտը"**

կը խօսի Բրշ. Կարօ Սրկ. Նոյնուտեան


5

Չորեքշաբթի, 10 Ապրիլին՝

**"Պատրա՛ստ Ես Ինքնաքննութեան"**


կը խօսի Առաջնորդ Սրբազան հայրը՝

Գերշ. Տ. Բարգէն Արքեպիսկոպոս



**ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒ**  
**Հայ կեդրոնի ճաշարան**

**Զատնուայ Ճաշկերույթ**  
**Buffet**



**Կիրակի 21 Ապրիլ 2019**  
**Կէսօրուան ժամը 1:30ին**

**Մուտքի նուէր՝ \$35**  
**6-12 տարեկան՝ \$20**

**Տեղերու ապահովման համար**  
**հաճեցէք հեռաձայնել՝**

**514-653-8870**  
**514-465-4093**

